

աս բոյսէն նոր օգտակար բան մը չճը-
նարեն :

Պարզաբոյ ծառերուն համար նոր
պարարիչ-թիւն :

ՀԱՐԻԻՐ լիպրէ ջրին մէջ մէկ լի-
պրէ հասարակ սոսինձ եփէ, ու պա-
ղելէն ետեւ մէյմէկ քիչ տուր ան հին
կամ տկար ծառերուն որ քիչ պտուղ
կուտան . բայց այնպէս որ ջուրը ին-
չուան անոնց արմատին հասնի : Եւ
գործողութիւնը տարին երկու ան-
գամ ընելու է :

Ընդհանրացի ճարտար երկրագործ-
ներէն մէկը փորձով կը հաստատէ,
թէ նաեւ նոր տնկած բոյսերու ալ
շատ օգտակար է աս ջուրը :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Տար-ոյն Վերջի օրը :

Եւ տարիս ալ կը լմննայ . . . աս
տարիս ալ լմնցաւ : Ո՛րչափ դիւրին
է բերնով ըսելը, որչափ ծանր է սրը-
տով լսելը : Եւ մանակին արագու-
թեանը նայելով՝ այնպէս մը կ'երեւայ
թէ գիրք մը թղթատելը՝ ճակատէն
ինչուան վախճանը հասնիլը որչափ ա-
տեն որ կը քչէ, տարւոյն շրջանն ալ
անկէ աւելի չքչեր, և թէ տարի
տարուրն է շուտ կ'անցնի . կամ ան է
որ ժամանակը յոգնելու տեղ երթա-
լով աւելի կը վարժի թուելու, կամ
ան է որ մարդուս տգողութիւնը
որ ունի կենաց կարճութեանը վրայ՝
հասակը առնելով կ'աւելնայ : Եւ անկ
մտածողը մէկ տարին՝ մէկ օրուան պէս
կը փոխէ : Բայց թէ որ յանկարծ մը-
տածելու ըլլայ՝ թէ աս տարիս աշ-
խարհքիս սկիզբէն 'ի վեր վազած ժա-
մանակին ու թըհազարերորդ մասն է,
ապշուրթիւն մը կը տիրէ մտքին, ու
ժամանակը առջինէն աւելի կարճ ե-

րենալով, իր մասունքը՝ այսինքն տա-
րիները կը սկսին երկայն երեւնալ՝ մէյ-
մէկ դարերու պէս, օրերն ալ մէյմէկ
տարիներու պէս . կը տեսնէ կը մտածէ
աշխարհքիս վրայ եղած անցած ան-
թիւ անհամար գործքերն ու գիւտե-
րը որ կը պատմուին այնչափ գրքերու
մէջ, որ 8000 տարին չբաւեր ասոնք
միայն կարդալու համար . կ'ապշի կը
զարմանայ թէ ան կարճ միջոցին մէջ
ինչպէս անցեր են այնչափ դիպուած-
ները, ու կը սկսի ըսել թէ ուրեմն որ-
չափ մեծ շրջան է տարւոյ մը շրջանը,
կամ որչափ ընդարձակ միջոց է եղեր :

Եւ անցուցած տարիս ալ արդեօք
այն զարմանալի տարիներէն մէկն էր :
Ինծի կ'երեւայ թէ աս տարիս պա-
րապ նաւու մը կը նմանէր որ ժամա-
նակին եզերքը նոր հասած ատենը՝ իբր
թէ նաւահանգստին բերանն էր . ու
քանի որ ալիքները չղքելով կ'անցնէր,
աւելի բեռնաւորած՝ լըցուած՝ հասաւ
յաւիտենականութիւն ովկիանոսը . . .
Վանի միլիոն մարդ հետը աշխարհք
բերաւ, ու քանի միլիոններ անդին ան-
ցուց : Վանի փոփոխութիւններ եղան իր
անցնելու ատենը ծովու ու ցամաքի
վրայ : Ինչ փոփոխութիւններ եղան
մեր բարոյական և քաղաքական վի-
ճակին վրայ : Ինչ նոր նոր գիւտեր,
նոր կարծիքներ, նոր ճամբաներ, նոր
օգուտներ, նոր վտանգներ . քանի
նոր վարդապետութիւններ ու նոր մոլո-
րութիւններ ելան . որչափ նոր կար-
գեր, նոր սահմաններ, նոր ժառան-
գութիւններ : Վանիներ մեծցան,
քանիներ պզտիկցան . քանիներ ա-
ռաջ գնացին, քանիներ ետ մնացին .
որչափ մարդիկ իրենց հին փափաքին
հասան, որչափ մարդիկ ալ յուսահա-
տեցան : Ո՛րչափ նոր յիշատակարան-
ներ կանգնուեցան աշխարհիս վրայ, և
որչափ հիններ ջնջուեցան . քանի նոր
անուններ լսուեցան որ թերեւս միշտ
ալ պիտի մնան, ու քանի անուններ
մոռցուեցան :

Սարդուս միտքն ալ՝ անցուցած տա-
րին ալ կ'ընդարձակուի այսպիսի մը-